ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 սեպտեմբերի 2013 թվականի N 142-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով և 70-րդ հոդվածով, <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2013թվականի սեպտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 2-ի N 35-Ա որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին>> N 806-Ա որոշումը, **ո ր ո շ ու մ եմ՝**

1.ՀՀ Սյունիքի մարզպետի 2013 թվականի հունվարի 18-ի <<ՀՀ Սյունիքի մարզպետարանի հաստիքացուցակը և աշխատակիցների 2013թվականի պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 3-Ա որոշմամբ հաստատված N1 հավելվածի (հաստիքացուցակի) <<Քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական>> բաժինը լրացնել նոր՝ առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 68- 3.2-36) բառերով:

2.ՀՀ Սյունիքի մարզպետի 2013 թվականի հունվարի 18-ի <<ՀՀ Սյունիքի մարզպետարանի հաստիքացուցակը և աշխատակիցների 2013թվականի պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 3-Ա որոշմամբ հաստատված N1 հավելվածից (հաստիքացուցակից) հանել <<Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովություն>> բաժնի 4-րդ տողի <<առաջատար մասնագետ>> (ծածկագիր 68-3.2-12) բառերը:

3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

2013թ. սեպտեմբերի 28
ք. Կապան